

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԾՈՒՄ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Վամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է առանձին լիցիտով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանները բառին 2 կոպեկով.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԾՈՒՄ

ԲԱՏՎԱԾ Է ԿԵՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՏՎԱՅԻՆ ԼՐԱԴՐՈՒՄ

«Մշակ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարեկան վերջը ՎՅՅ ռուբլի. մէկ ամսվայ
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարեկան համար 3 դոլլար,
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կարգաւորված օրը թողնելով «ՄՇԱԿ»-ը գրվում են համար, և առհասարակ նամակներ և
ձրարներ ուղարկելու, պէտք է գրվում հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, РЕДАКЦИЯ „МШАКЪ“;
իսկ արտասահմանից—TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լիցիտներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա ժ Ա Ն Ո Ր Ի Վ Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Չ Է Ը Ն Ի Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲԱՏՎԱՅԻՆ ԼՐԱԴՐՈՒՄ

Վիճակի փոփոխութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Արաւելայից. Նամակ
Կանադայի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Տեղեկութիւններ
Վանից. Նամակ Պարսկաստանից. Արաւելայի
լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԱՌԱՎԱՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ
ՅԱՏՎԱՅԻՆ ԼՐԱԴՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ:

ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈՒՄ

Մի քանի ամիս առաջ Կովկասի արդիւ-
նագործական մեծ կենտրոններում, Բաքու-
ում, Թիֆլիսում, Բաթումում նկատվում
էր զբաղմի մի տեսակ առատութիւն, կամ
ուրիշ խօսքով փողի հեծանութիւն: Բան-
կային հաստատութիւնների մէջ հարց էր
կարուցվել տոկոսները իջեցնելու մասին:
Մեծ գրամատերերը համաձայնվում էին
փողը տոկոսով գումարներ տալ մասնաւոր
անձանց, գրաւականներ վերցնել և գնել
այնպիսի հողեր և կալուածքներ, որոնք
չեն բերում մեծ արդիւնք և ապահովում
են միայն 5—3 և աւելի նուազ տոկոս:

Փողի այդ հեծանութիւնը հետեանք էր
մի քանի հանգամանքների: Նախ, ինչպէս
յայտնի է, պետական բանկը ահա շարու-
նակ մի քանի տարի է, որ իջեցնում է
պահեստադրամների և տոկոսների թիւը:
Երկրորդ, բնական է, որ փողատերեր-
ը, տեսնելով իրանց գումարների տոկոս-
ների աստիճանաբար իջնելը, մտածեցին
տալ իրանց գումարն ուրիշ աւելի լաւ գոր-
ծութիւններ, ուստի նրանք հանեցին ի-
րանց պահեստադրամները և սկսեցին մրցոյ-
նել այնպիսի ձեռնարկութիւնների մէջ,
որոնք տալիս էին աւելի տոկոս, քան բան-
կը. սկսեցին գնել տներ, հողային տարա-
ծութիւններ և կազմակերպել տեխնիկա-
կան արդիւնագործութիւններ: Նրկորդ
մեր վաճառանոցում յանկարծ երեւաց փո-
ղի մի խոշոր քանակութիւն անգլիական և
ուրիշ կապիտալիստների մեր երկրից դա-
լու պատճառով: Օտարազգիները, գնելով
նաւթային և ուրիշ հանքային հողեր և
գործարաններ, թափեցին մեծ քանակու-
թեամբ ոսկի մեր երկրի մէջ և գրամա-
կան վաճառանոցում առաջ բերին մի տե-
սակ իրաւանքներ: Օտար միլիոնները տեղ
էին որոնում իրանց գործարարութեան հա-
մար և մինչև որ կը գտնէին յարմար գոր-
ծեր, հեծանքնում էին փողի գինը և ի-
ջեցնում նրա տոկոսը:

Սակայն երկար չը տեւեց այդ դրութիւ-
նը: Այժմ սկսվել է հակառակ շարժում,
փողը օրից օր աւելի թանկանում է և
առհասարակ հրապարակի վրա փող չէ
երեւում: Բանկերը չեն ընդունում պարտա-
մուրհակներ, որովհետեւ անկարող են լինու-
թիւն տալ բոլոր պահանջներին: Շատ
գրամական պարտաւորութիւններ մնում
են անկատար. զգացվում է նոյն իսկ ձգ-
նաժամի սպառնալիք:

Ներկայ գրամական ձգնաժամի պատճա-
ռը կարելի է բացատրել նրանով, որ փողի
մեծ քանակութիւն կանգնեց կարծ միջո-
ցում մի շարք ձեռնարկութիւնների մէջ:
Օրինակ, Բազուի այն մեծ աճուրդին, որ
տեղի ունեցաւ Բիրի-Նէյրաթի նաւթային
հողերը բաժանելու ժամանակ, աճուրդատ-
ները պարտաւոր էին մտցնել մեծ քանա-
կութեամբ կանխավճարներ, որոնցից կազմ-
վեց մի քանի միլիոնի հասնող մի մեծ
գումար: Բայց այդ ձանդամները դեռ ան-
կարող էր մեծ փոփոխութիւն մտցնել փո-
ղի վաճառանոցում: Տեղի ունեցաւ երկ-
րորդ, աւելի ընդարձակ և ազդեցիկ մի
հանգամանք. այն է, որ սկսվեցին մի շարք
արդիւնագործական մեծ ձեռնարկութիւն-
ներ, որոնք օգտվելով առատ կրեդիտից և
ընկերակցական կազմակերպութեան յար-
մարտութիւններից, արին լազմաթիւ խոշոր
ծախսեր և տուին մի շարք պատուէրներ
Ռուսաստանի և Անգլիայի գործարաններին:
Սկսեցին տեղի ունենալ մի քանի ստանալու նը-
պատակով վաճառանոցում եղած փողը
անբաւարար յայտնվեց. նա բոլորովին
անհամապատասխան էր այն մեծ պահան-
ջին, որ ցոյց էր տալիս ընդարձակիւղ ար-
դիւնագործութիւնը: Հետեանք մեր աչքի
առջևն է: Այժմ Բազում փող են որո-
նում այնպիսի պայմաններով, որոնց առաջ
նսեմանում է վաճառութեան վերաբերեալ
օրէնքի սահմանած չափը:

Առանձին անհատներ, անկասկած, կը
գտնեն ելք ներկայ դժուար դրութիւնից,
բայց շատերը կը վնասվեն: Անհրաժեշտ են
այնպիսի միջոցներ, որոնք օգնէին շատե-
րին: Ցանկալի է, որ արդիւնագործու-
թեան նուիրված անձինք միմեանց մօտե-
նային և խորհրդակցէին ընդհանուր վի-
ճակի մասին: Անկասկած, ներկայ ձգնաժա-
մը միայն անցողական մի փուլ է, որովհե-
տեւ արած ծախսերը վատնված չեն, այլ
գործադրված են արդիւնագործութեան
զարգացման վրա: Ժամանակ է հարկաւոր,
որ ծախսերը վերադառնան և տան իրանց
շահը և օգուտը: Իսկ մինչև այդ՝ անհրա-
ժեշտ են նպաստող և օգնական միջոցներ,
որոնք ազատեն ձեռնարկութիւնները վը-
տանգից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Գրականութիւնը ժամանակի հայելին է: Խնչ
կարող է ցոյցանել իր մէջ այդ հայելին այժմ,
երբ ամեն ինչ մանրացել է, ընկել, երբ գրելը
«իշխակ» է դարձել և ստեղծագործող հորձքը
հեռու է փախել գրողից—Ի հարկէ, միայն մի
ստոր և անպատիւ անկում, միայն ապակաւու-
թիւն և ցեխ: Եւ ժամանակակից այդ թշուա-
րութիւնը պատկերանում է օր օրի վրա ծաղ-
կող պատկերի մէջ: Նիւթ չը կայ, վերցրել ձեռ-
նաօթին և նկարագրեցէ նրա մասնաւոր կեան-

քը, որ ոչինչ հասարակական նշանակութիւն
չունի: Նիւթ չը կայ, ակամջ դրէք ձեռ շուրջը
պտտող ըստըստներին, «սոսէ-կոսէներին» և
ինչ որ լուծ էք, գրի անցկացրէք: Խնչ աւելի
հեշտ բան: Ձեռնից մաքի ստեղծագործող այժ
չէ պահանջվում. դուք պարտաւոր չէք երկար
ու բարակ մտածելու, դուրս պտտելու, որ
ձեր տուած պատկերները մէջ կեանքի ընդհա-
նուր փաստեր լինեն, տիպ լինի: Ոչ: Դուք նը-
կարագրեցիք մի կամ երկու մարդուն, ծածկե-
լով նրա դէմքը բարակ, թափանցիկ քողով—և
հաւաւան ինչ պատրաստ է: Ընթերցողը յա-
փշտակութեամբ կը կարդայ, որովհետեւ նա ճա-
նաչել է, թէ ում էք նկարել ձեռ պատկերի մէջ,
յուրաքանչեւ կառաջանայ, բազմաբնուած, փողոց-
ների անկիւններում, այս և այն խանութում,
այս և այն սալօնի մէջ կը խօսեն, կը ընեն,
թէ ինչպէս է այս ինչ գրող մարդը այն ինչ
մասնաւոր մարդուն ճանաչել, ինչ խայտառակ
գոյնների մէջ է դուրս բերել նրան: Ընկնում է
գրականութեան պատիւը, հրէշաւոր աղճատման
է ենթարկվում ընթերցողի ճաշակն ու միտքը:
Գրականութիւնը հարցեր չէ դարձնում, չէ
թերցողի ժողովն ազնիւ կրթութեան ճաշակ ըն-
տալիս, այլ դնում է հրապարակում անձնաւոր-
ութիւններ, որոնց վրա դատաստան են անում,
որոնց կեղեքում են: Մտաւայում է այն հիմա-
կան օրէնքը, որ մասնաւոր մարդը իր մասնա-
ւոր կեանքով չէ կարող գրական հրապարակը
դուրս գալ. մտաւայում է, որ գրողից իդէալ
գեղարուեստական ամբողջութիւն, անկողմնա-
պահ ընդարձակութիւն է պահանջվում և ոչ թէ
ձրի բաժանանք, լիքը չարախօսութիւն: Այս
բոլորը մտաւայում է. ամբողջ սիրում է պակ-
կի, ուղում է տեսնել թէ ինչպէս է խայտա-
ռակված այս կամ այն ծանօթ անձնաւորու-
թիւնը և կատարեալ յաղթանակ է տօնում,
երբ իր ուղածը ստանում է: Յիշում ենք, թէ
մի երկու տարի առաջ Թիֆլիսում ինչ մեծ ա-
ղողութիւն ունեցաւ մի գրողի, կեղտոտ պակ-
կի: Նրան խլում էին ձեռքից ձեռք, նրան
թափոնական պիէս դարձրին և հայոց խղճով
թափոնք, որ սովորական ժամանակ, այսինքն
Նիլլէրի կամ մի ուրիշ հեղինակի պիեսների
ներկայացման ժամանակ, տառապում է ամբող-
ջների դատարկութիւնից, չէր կարողանում տե-
ղադրել իր մէջ այն բազմութիւնը, որ եկել էր
տեսնելու, թէ ինչպէս են բնած վրա ներկայաց-
նում այս ինչ մարդուն: Այսպէս է փչանում հա-
սարակութիւնը և այս կերպով է կատարվում
գրականութեան թաղումը: Եւ այսպէս եթէ շա-
րունակվի, ոչ որ չի ուղի կարդալ մի գիրք կամ
լրագրական յօդուած, որի մէջ չի լինի պակ-
կի: Բազում տարի, գրողի գրապատմութիւնների
նիւթ: Մենք, որ միշտ անհաշտ լինում ենք և-
ղել պակկիներին, գրական այս կեղտոտ ար-
տագործութիւններին, որոնք ամեն մի օրինակ
հասարակութեան մէջ ինչպիսի ատելութեան և
զրուանքի են արժանի, չենք կարող չարձա-
նագրել մի փաստ, որով պատժեց պակկիլը:
Նշանաւոր է մասնաւոր, որ այդ պատիժը կա-
տարվեց մի շատ համակրելի միջոցով, մի այն-
պիսի ձևով, որ մինչև այժմ մեր մէջ, Կովկա-
սում, շատ օրինակներ չունի:

Ահա իրողութիւնը: Բազուի «Raenik» լրագ-
րում այս տարեկան մարտ ամսին տպվեց այդ
լրագրի աշխատակից Ն. Կոզերնիկոսի մի ֆելիե-
տօնը՝ «Շատերից մէկը» վերնագրով: Նկարա-
գրված էր նրա մէջ մի ինժեներ, որ հարստա-
նալու նպատակով դիմում է անագին և ստոր
միջոցներով: Ինժեները նկարագրված էր այն-
պէս, որ Բազուի ինժեներներից մէկը, Կ. Խա-
տիսեան, հասկացաւ, որ հեղինակը Մատով ա-
նուն տակ նկարագրել է իրան: Եւ այդ պատ-
ճառով պ. Խատիսեան դիմեց հեղինակին, պա-
հանջելով բաւարարութիւն տալ իրան մի միջ-
նորդ դատարանի առաջ: Կոզերնիկոս և Խա-
տիսեան համաձայնութեամբ ընտրեցին դատարանը,
երկուսն էլ համաձայնվեցան անտրտուն ըն-
թարկել դատարանի վճիռը: Միջնորդ դատա-
րանը երկար ու մանրամասն ըննութիւն կա-
տարեց, որպէս զի կարողանայ իմանալ թէ որ-

քան իրաւացի են այն մեղադրութիւնները, որ
Կոզերնիկոս բարդել է Խատիսեանի վրա: Այժմ
«Raenik» լրագրում տպված է դատարանի վճի-
ռը, որի մէջ ամենից առաջ ուշադրութիւն է
դարձնում այն հանգամանքը, որ պակկիլի հե-
ղինակը ըննութեան ժամանակ բոլորովին այն-
պէս չէր պահում իրան, ինչպէս վայել է մի
մարդուն, որ ձգտում է ճշմարտութիւնը պար-
զել: Եւ այդ հասկանալի է. պակկիլը գրելու
յօժարութիւնը յանձն առած մարդը ուրիշ մի
պատուաւոր դրութեան մէջ չէ կարող լինել,
երբ պէտք է պատասխան տալ արածի համար:
Ահա և դատարանի որոշումները:

1) Ճանաչել Կ. Խատիսեանին ազատ բոլոր
կասկածներից այն մեղադրանքների վերաբեր-
մամբ, որ բարդել է նրա վրա Ն. Կոզերնի-
կոս յանձին Մատովի, իսկ նրա (Խատիսեանի)
պատիւը և բարի անունը մաքրել հրատարա-
կելով «Raenik» լրագրի մէջ միջնորդ դատա-
րանի գործի բովանդակութիւնը և նրա որո-
շումները: 2) Ընդունել, որ Ն. Կոզերնիկոս
վերաբերվել է տաղաքական խօսքին չափա-
զանց թեթեւամիտ կերպով: 3) Ընդունել, որ
Ն. Կոզերնիկոս թէ և առանց մի չար դիտաւոր-
ութեան, բայց մի և նոյն ժամանակ և ա-
ռանց որ և է հիմքի, անարդար և անբաղա-
րաւարի կերպով է վերաբերվել Կ. Խա-
տիսեանի անձնաւորութեան, որպէս մի մարդու,
և առհասարակ նրա բարի անունը: 4) Ըն-
դունել որ Ն. Կոզերնիկոս վարժուածք միջ-
նորդ դատարանի ըննութեան ժամանակ ան-
վայել է մի անձին, որ դիմում է պատուի
դատարանի միջնորդութեան և ձգտում է
պարզել ճշմարտութիւնը:

Ներկայ դէպքում մեզ հետաքրքրող ինքը,
փաստն է, իբրեւ երեկոյթ, իբրեւ գրական բար-
բերը շաղկոյ մի գործ: Մենք սիրով ընդունում
ենք որ հեղինակը չար դիտաւորութիւն չէ ու-
նեցել, բայց դիտաւորութեան մաքրութիւնը,
եթէ նոյն իսկ աւելացնենք նրա վրա «Թեթեւա-
մտութիւնը», չէ կարող արդարացնել մի այն-
պիսի անպայման տողը և իւրաքանչիւր ազնիւ
մարդու համար արատաւոր գործը, ինչպէս է
պակկիլը: Վերջինս այնպիսի մի չարք է, որ
մենք ամենայն հաճութեամբ ողջունում ենք այն
պատիւը, որին նա արժանացել է: Դա օգտա-
կար է թէ հեղինակի և թէ մասնաւոր մեր հա-
սարակութեան և գրականութեան համար: Հա-
զար անգամ ասել ենք և այժմ էլ կրկնում ենք.
մինչև որ հասարակութիւնը չը սովորէ պատժել
իր մէջ երևան եկող տղեղ, արատաւոր, անճու-
նի երեկոյթները,—ոչ միայն չէ կարելի յուսալ թէ
նա կը դառնայ մի բարոյական հասկացողու-
թիւն, այլ նոյն իսկ չէ կարելի ասել թէ նա
կապրի իբրեւ առողջ օրգանիւղ և առաջ կը զը-
նայ...

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՑՈՒՄ

Յուլիսի 17-ին

Ուրբաթ, յուլիսի 16-ին, երեկոյեան ժամը
7-ին, հասարակական գրադարան-ընթերցարանի
դահլիճում, կայացաւ Բարեկործական ընկերու-
թեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովի ար-
տակարգ նիստը: Ինչպէս յայտնի է, սրանով
երկրորդ անգամն է, որ անդամներին ժողովի
են հրաւիրում, բայց նշանակված օրը հասարակ
օր լինելով՝ սպասածից քիչ էին եկել ժողովին.
ընկերութեան 105 անդամից ներկայ էին հազիւ
22-ը, իսկ նիստի ընթացքում հասաւ 26-ի: Ժո-
ղովի հերթական հարցն էր, ինչպէս յայտնի է.
1) կենտրոնական խորհրդից յետ վերցրած 2154
ր. ճիւղիս յատուկ գումարի մասին տնօրէնու-
թիւն անել, և 2) մտածել և որոշում կայացնել
ճիւղի գրադարան-ընթերցարանի ապագայ վի-
ճակի մասին:

Նախագահը, ժողովը բանալով, յայտնեց, որ
նոր կանոնադրութեան համաձայն, պէտք է Բա-
րեկործական ընկերութեան ճիւղերը անջատվեն
միմեանցից. այդ պատճառով Արաւելայի ճիւղի
առաջարկութեամբ արդէն խորհրդից յետ է
ստացվել 2154 ռուբլի յատուկ գումարը, որի
մասին նախագահը խնդրում էր անորոշութիւն
անել: Ժողովականներից մի քանիսը յայտնեցին,
թէ քանի որ նուիրողները տուել են այդ գու-
մարը ընկերութեան՝ մի բարի նպատակին յատ-

կայաններու համար, ուստի այժմեանից պէտք է գործադրել այդ գումարը մի բարենպաստակ հիմնարկութեան վրայ: Մի քանիսն էլ ցանկութիւն յայտնեցին պահել այդ գումարը ապագայ բացվել նոր ընկերութեան համար: Այդ հարցը ընդարկութեան ենթարկվելով, ձայների առաւելութեամբ որոշվեց՝ անպատճառ այժմեանից գործադրել այդ գումարը:

Գումարը գործադրելու համար մի քանիսը յայտնեցին, թէ աւելի լաւ է, որ ընկերութիւնը այդ գումարը ուղարկի Քիֆլիսի պետական բանկը և քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու անունով պարտաճուրհակ ստանայ, այն պայմանով, որ ամեն տարի այդ գումարից ստացված տոկոսը յատկացվի այժմ նոյն եկեղեցու գոյութիւն ունեցող աղքատներին գանձարանին: Մի քանիսն յայտնեցին, որ այդ գումարից ստացվող տոկոսը այնքան քիչ է (80 ր.), որ քաղաքիս բազմաթիւ աղքատներէ իւրաքանչիւրին հազիւ մի քանի կոպէկ հասնի. աւելի նպատակաւոր մար է այդ գումարը ուղարկել Երուսաղէմ և պատճենի իրաւասութեան տակ դնել այն պայմանով, որ նրա տոկոսով պահվեն մի երկու հայ որբեր Ախալցխայի անունով այնտեղի հայ որբանոցում: Գաղտնի ընդարկութեամբ որոշվեց՝ այդ գումարը ս. Փրկիչ եկեղեցու իրաւասութեան տակ դնել, այն պայմանով, եթէ նա իրաւունք ունի պահելու այդպիսի գումար, իսկ եթէ չունի, այն ժամանակ, առանց այլևայլութեան, ուղարկել Երուսաղէմի որբանոցին:

Այս որոշումից յետոյ մի քանի անդամներ կողմից ցանկութեան յայտնվեց այդ գումարի մի քննչին մասը հանել յօդու գրաւարան-ընթերցարանի գրապահի և ծառայի, իրանց երկարամեայ ծառայութեան փոխարէն: Գրապահը մինչև այսօր, բացի իր պաշտօնից, վարում էր և վարչութեան բարոտուղարի պաշտօնը, վերջինը ձերբաբար: Որոշվեց տալ ամբողջ տարվայ ուսմանը, իբրև նպաստ, գրապահին՝ 204 ր., իսկ ծառային՝ 72 րուբլի:

Այս վարչութիւնը յայտնեց, որ ինքը ներկայումս շատ քիչ փող ունի, միայն մի քանի ապուրիկ եկամուտներ ունի, ուստի խնդրեց մի քանի րուբլի էլ յանձնել վարչութեան: Ներկողը հարցը, այն է՝ անտանելու և որոշումն կայացնելու գրադարան-ընթերցարանի ապագայ վիճակի մասին, յետաձգվեց, և նիստը ամբողջ երեք ժամ տևելուց յետոյ, փակվեց ժամը ուղիղ 10-ին:

Անդամ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՌԱՌՈՒՅՑ

Բանանց գիւղ, յուլիսի 12-ին
Սարսափելի երաշտը, մայիսի վերջերից սկսած, այրեց, ոչնչացրեց Գանձակի լայնատարած գաւառի արտերի, խոտհարքների ու արօտանդիւնների մեծ մասը, որոնք կազմում են գիւղական ժողովրդի գոյութեան գլխաւոր աղբիւրը. անհնչան բացառութիւն կազմում են գաւառի լեռնային մասերի խորքերը, ուր խոտերն ու արտերը փչացել են կիսով չափ, իսկ գարնանացանքները կարող են բուրդով փչանալ, եթէ երաշտը չարունակի այսպէս: Գարնանը, մարտի սկզբներից մինչև ապրիլի կէսը, տիրում էր նոյնպէս երաշտ, այնուհետև սկսվեցին յորդաւառ անձրևները, որոնց հետեց այժմեան երաշտը: Օր օրի վրա վերջինս աւելի ու աւելի զգալի է դառնում. աղբիւրներն ու առուակները ցամաքում են, գետերում ջուրը պակասում է, այգիներին ու բանջարանոցներին սպառնում է չորանալու վտանգը:

Թէ գիւղերում և թէ նոյն իսկ Գանձակում տեղի են ունենում ջրի համար անխիւ ու անվերջ կռիւներ. յաղթանակը, ի հարկէ, տանում է ուժեղը, վնասվում է թոյլը. քրաքաշ-խոթիւնը չէ կանոնաւորված ցանկալի չափով, թէև վարչութիւնը այդ նպատակին հասնելու համար ջանքեր է անում: Յուսահատված ժողովուրդը դիմում է սրբերի օգնութեան: Կանայք ջուր են առնում նրանց գերեզմանների վրայ. նրանց կարծիքով, բաւական է մի բաժակ ջուր ածել Քարգմանչաց անապատի Քեանդաղբեմազ վանհօր, Ստեփանոս վարդապետի գերեզմանի վրայ, որ իսկզբն անձրև գայ. այդ անուն են, բայց անձրև չէ գալիս: Նրանք սկսում են վարել գետը. «գետ վարելը» նշանակում է, որ երաշտը այնքան սարսափելի է, որ ցամաքել են նոյն-իսկ գետերը և վարելու դարձել: Այդ ծէսը կատարվում է այսպէս. կանայք վերցնում են գոլթանք և լաց ու կոծով գնում գետը. մի քանի զոյգ նրանցից ընկած են, իսկ մինը, ամենից հասակաւորը, բռնում է մաճը. զինքն տղամարդի փափախ դրած, վարում են և բոլոր ժամանակ Աստուած կանչում:

Երաշտը թէ քաղաքում և թէ գիւղերում իրան-

գարել է այն յաւիտեական քաղցը ըստը, որին ենթարկված է հոգեւորականութիւնը. նա սկսել է մի անօրինակ եռանդուն զործունէութիւն. կատարվում են մաղթանքներ, թափոններ, հսկումներ, որոնք ուղեկցվում են բազմաթիւ մատաղներով: Վերջիններս հռչակաւոր «Տէրինք», մոլորիներն ու ոտնապոկները հանդերձ՝ հաւատացեալների առատ ժամօցներով ու գանձանակով դնում են ուր հարկն է, բայց հակառակի պէս անձրև չէ գալիս. Աստուած կարծես խռովել է մեր գլխին: «Տէրը» ճարահատեալ իրար վրա բռնութիւն է քաշում ու անիծում ժամանակին թեթաւատութիւնը, որն է երաշտի ու այլ աղէտների միակ պատճառը: Երբ թափոնները չեն օգնում, գնում են հեռաւոր Արթուր լեռը՝ այնտեղից սուրբ քար բերելու՝ գետը գցելու համար, որ անձրև գայ: Այս տարի Արթուրի քար բերեցին ապրիլի 11-ին ու մեծ հանգստով Բահանցում ջուրը գցեցին: Այժմ ս. Արթուն էլ չէ օգնում: Նորեքս Խաչակապ գիւղից ձերտնի տէր-Սը, որն իր ոտները մաշել է սուրբ Արթուրի ճանապարհի վրայ, գնում է քար բերում այնտեղից ու մեծ հանգստով գցում գետը, բայց լիւր. անձրև չէ գալիս: Միշտ յարգված «տէրի» գլխին թափվում է ժողովրդի բուռն դայրոյթը. նրան մեղադրում են այժմ, ասելով՝ «Եթէ, էս ինչ արիւր, ինչու գնացիր մեզ համար կրակ բերար, մեր տները ինչու քանդեցիր. քո ոտը Արթունայ ճանապարհին կոտրած պտէր, ւ գլխամեռ: Անձրև չը դալը ժողովուրդը վերագրում է այն հանգամանքին, որ տէր-Սը, Արթուն ճանապարհիցուց առաջ, պահանջում ու ստանում է հինգ րուբլի աշահամարք գիւղական տանուտէրից. հէնց այդ անտեղի աշահամարքի համար է ս. Արթունը բարկացել և անձրևի տեղ կրակ ուղարկել աշխարհին: Այնքան զայրացած է ժողովուրդը տէր-Սի դէմ, որ արժանապատիւ. զգլխամեռն ակամայ ստիպված է ենթարկել իրան տնային բանտարկութեան, որից նա աղաւթել կարող է միմիայն այն դէպքում, երբ կը շարժվի վերջապէս Ս. Արթուն ձգնաւորի դուրսը, և նա կրակի տեղ անձրև կուղարկի աղբիւր-տապակիւղ աշխարհին:

Բանանց գիւղում հանգստութիւն չեն տալիս խեղճ Պապին: Վերջինս մի հին ձեռագիր աւետարան է: Ասում են, որ եթէ նա եկեղեցուց դուրս գալ ու չըջի, իսկոյն անձրև կը գայ, ու կը վերանան ամեն տեսակ ցատկներ: Երբեմն լուծ են՝ Պապը գնացել ա Ներքի-Հանդը, Պապը գնացել ա սարը, Պապը գնացել ա Գեօրի-դարձը... Պապին այդ գերբնական ճանապարհորդութիւնները մասին լուրեր անհնչում, ժողովուրդը արտասովում է ու աղօթում, բայց անհասկանալի պատճառներով անձրևներ չեն տեղում: Պապին գուժը նոյնպէս չէ շարժվում: Աւելորդ է ասել, որ աղէտների ու ամեն տեսակ փորձանքների ժամանակ աղօթելը շատ լաւ է, բայց նրանց շահագործումը յայտնի դասակարգի ձեռքով յանապաւնայն աննիքելի է: Այն գումարները, որոնք հանգանակվում են մատակարարի, ժամկետների ու արտաքին կարգի աշահամարքների համար, կարելի է գործ դնել հասարակական շտեմարաններին հիմնարկութեան համար, որոնց կարելիք առանձնապէս զգացվում է այսպիսի տարիներում: Թէ քաղաքներում և թէ ևս առաւել գիւղերում նրանք անհրաժեշտ են. միմիայն նրանք կարող են այսպիսի աղէտալի տարիներում մատակարարել ժողովրդին մասնակի գնորդի հաց ու ազատել նրան նրա արկւնարբու թշնամու, վաշխառուի ճանկերից: Ետեմարանին ցորեն կամ փող նուրբը Աստուծու համար անկասկած ամենահաճելի մատուղը կարելի է համարել, որը ոչ մի դէպքում էլ կարող արգելք լինել մաղթանքներ կատարելուն: Բանանցի գիւղում հասարակական շտեմարան հիմնված է 1898 թ., որից ամեն մի իսկական կարիք ունեցող կարողանում է նպաստ ստանալ:

Ստ. Տէր-Աւետիքեանց

ՆԵՐՔԻ-ՀԱՆԴԻ

«Արեւելք» հաղորդում է. «Երեկ, իրիկուան կողմ, ու պարտիարք հայրը Պէոյիւքէնէի ուսական դասպատնատունը երկվարով, այցելութիւն տուաւ դեսպան պ. Ձինովիէի և ցաւակցութիւն յայտնեց՝ Յարին եղբոր Գէօրի Մեծ-Գուքսին մահուան առթիւ:

Ինչպէս յայտնի է, Բաղուր մէջ բացի նաւթաբեր գործից կայ և բրինձ մաքրելու արդիւնագործութիւն: Կազմվել է մի ընկերակցութիւն, որ մտադիր է զբաղվել նաւթագործական, արկղագործական և բրինձատափական ձեռնարկութիւններով: Ընկերակցութիւնը պէտք է ունե-

նայ 600,000 րուբլի հիմնական: Գրամագուլու, բաժանված 2400 ակցիայի: Հիմնադիրներն են՝ Ս. Փռւմանեանց և Գ. Բենենսոն: Ընկերակցութեան պաշտօնական անունն է՝ «Ваканское торговопромышленное общество Рязь-Петроль»:

Պատկերասրահի քաղաքային վարչութեանը Բարձրագոյն թոյլատրված է հինգ տարի շահույթի ժողովել այդ քաղաքը եկող մարդկանցից որոշված տուրքը, սկսած մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, համաձայն պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված կարծիքի:

«Արեւելք» մէջ կարդում ենք. «Կայսերական այն բարենաճ Իրաւունք, ինչպէս ծանուցուած է խառն ժողովի երէկուան նիստին համարատուութեանը մէջ, չնորհուած է առկալ խնդիրներու (?) անմիջական գործադրութեանը համար, երէկ հաղորդուեցու Բ. Դրանա:

Մեր երկրի արդիւնաբերութեան առաւելաներից մէկը՝ բամբակի և առայժմ լաւ գին ունի Մոսկվայում: Գտնելու անպակաս են: Յուլիսի 2-ին Մոսկվայում ծախվում էր Միջին Ասիայի բամբակի առաջին տեսակը 9 ր. 15 կ—9 ր. 20 կոպէկով պուղը, երկրորդ տեսակը 8 ր. 40 կ—8 ր. 50 կոպէկ: Ամերիկայում բամբակի բերքը այս տարի լաւ է. եթէ ձախորդ հանգամանքներ չը լինեն, ամերիկական բամբակի քանակութիւնը շատ կը լինի և գինը էժան:

«Казбек» լրագրին գրում են Բոստօլից, որ այնտեղի վաճառականների մի խումբ «Սալախա» անունով մի ընկերութիւն է կազմել, Կովկասի երկաթուղու Նաւախի կայարանի մօտ գտնվող նաւթային հողերը շահագործելու համար: Այդ ընկերութիւնը մտադիր է շուտով ձեռնարկելու գործին:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի լեռնային այն մասում, որ ընկած է Բարաղաղ կոչված լեռան շուրջը, ներկայումս գործում է հողափախների մի խումբ, որ ուսումնասիրում է աղտեղի ամբարայն արօտանդերը: Սակայն չափազանց չորութեան պատճառով բուսականութիւնը այնքան պակասել է լեռներում, որ թափառականներից շատերը թողել են արօտանդերը և չուել աւելի խոտաւէտ տեղեր:

ԿՅՁՈՐԻՑ հաղորդում են մեզ հետեւեալը. «Կօջրի և Քիֆլիսի մէջ գտնվող խնուղու երկու կողմից տնկված են ծառատունկեր, որոնք ապագայում կարող կը լինեն թէ գոկեցկացնել ճանապարհը և թէ նպաստել ստուեր տեղիւն խնուղու երկարութեամբ: Սակայն ոչ ոք չէ նայում և հսկում այդ տունկերի վրա. նրանցից շատերը սկսել են չորանալ, իսկ մի մասը բոլորովին փչացել է:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիսի վերջերին Հուսարիյում հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ: Իերձակութեամբ պարսպաղ, հրեական դաւաճութիւնից յունադաւանութեան անցած ձերտնի, որը գտնվում է Հուսարի փողոցի մի ծայրում, անյայտ շարագործները մտնում են գիշերով, սրբերով մտնում մարդ ու կնոջ՝ Լազարեֆներին, յետոյ նաւթով լի լամպաներ կոտորում են յատակի վրայ, վառում են, գոյացնելով հրդեհ և անհետանում են, հետեւող տանելով իրանց ձեռք ընկած իրեղէնները: Այդ սպանութիւնը մեծ իրարանցում է գցել Հուսարի մէջ: Լազարեֆ 30 տարիներից աւելի է, որ ապրում է այդ տեղ, և գործելով տաննակ տարիներ իր արհեստով, նա անդաւակ լինելով՝ փող էր դիւել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Ֆ Ր Ա Ն Ս Ի Ա

Վաղէկ-Բուսօի միմիայնութեան տարբեր տարբեր կազմված լինելու առիթ է տալիս դանազան դժուարութիւնների և յարձակումների Ինչպէս յայտնի է, մեծ դժգոհութիւն պատճառեց շտեմարանի գնեքալ Գալիֆէի և սօցիալիստ Միլիէրանի ներկայութիւնը Վաղէկ-Բուսօի միմիայնութեան մէջ: Հասարակական կարծիքը փոքր առ փոքր սկսեց հանդիման Գալիֆէի հետ և դրա վրա յարձակումները դադարեցին: Այլ է Միլիէրանի դրութիւնը. նրա մասնակցութիւնը միմիայնութեան մէջ ոչ միայն բողոքներ յարուցեց իսկականութիւնների կողմից, բայց և սօցիալիստների կողմից, և այդ դժգոհութիւնը ոչ միայն չէ պակասում, այլ գնալով սաստկանում է:

Հէնց որ Միլիէրան ստանձնեց միմիայնութեան պաշտօն, իսկոյն պառակտում սկսվեց նրա կուսակցութեան անդամների մէջ. նրանց մի մասը հրաժարվեց պաշտպանել այն միմիայնութիւնը, որին մասնակցում է գնեքալ Գալիֆէ. միւս մասը իր աջակցութիւնը խոստացաւ նոր միմիայնութեան: Այն ժամանակից բաւական միջոց անցաւ, բայց գործերի դրութիւնը չը բարւոյնեց:

«Անհաշտներ» կուսակցութիւնը, որը մերժեց իր աջակցութիւնը միմիայնութեանը և որի գլուխ են կանգնած Ժիւլ Գէդ և Վալիան, պառակտվում է Միլիէրանի կողմնակիցներին, որոնց պարագլուխներն են Թօրէս և Վիվիանի, և մեղադրում են նրանց օպորտունիզմի մէջ, ասելով թէ նրանք դաւաճանեցին կուսակցութեան շահերին: Նրանց կարծիքով, երբ մի սօցիալիստ մտնում է միմիայնութեան մէջ, որի կոչումն է պաշտպանել գոյութիւն ունեցող ընկեր, նա չեղում է պրօգրամից, հրաժարվում է դասակարգային կուսի քաղաքականութիւնից: Այս անհաշտները պախարակում են Թօրէսին, Միլիէրանին և Վիվիանին այն բանի համար, որ նրանք իրանց ամբողջ ուշադրութիւնը նուիրեցին Իրէֆիտի գործի վերաբնութեան համար սկսված արշաւանքին: Գէդը, Վալիանի և նրանց համախոհների կարծիքով, Սատանայի կողմնակցութեան վիճակը բուրժուազիայի, չափաւոր հանրապետականների դործն է, և ամենին առնչութիւն չունի բանւոր դասակարգի շահերի հետ, և այդ պատճառով սօցիալիստներն այդ գործի հետ կապելով, Թօրէս, Միլիէրան և Վիվիանի խախտեցին կուսակցութեան պրօգրամը:

Միլիէրան, որպէս միմիայն, չը կարող մասնակցել վիճաբանութեան, այնպէս որ անհաշտներն ստիպված էր պատասխանել միմիայն Թօրէսը: Այդ պատճառով էլ Գէդ և Վալիան գլխաւորապէս նրա վրա էին յարձակվում, մանաւանդ որ, յիշաւ, նա էր, որ սօցիալիստներին ստիպեց մասնակցել Իրէֆիտի սի օգտին սկսած արշաւանքին: Թօրէս ամեն կերպ աշխատում էր բացատրել իր հակառակորդներին, թէ Միլիէրանի մասնակցութիւնը միմիայնութեան մէջ չէ նշանակում, թէ սօցիալիստները հրաժարվում են իրանց պրօգրամից, թէ Իրէֆիտի գործը միմիայն բուրժուազիայի դործն է, որ այդ գործի վերաբնութիւնը նշանակում է ոչ միայն յաղթանակ ճշմարտութեան և արդարութեան, այլ և կործանումն կղերականութեան և գիւղական ընկերային:

Սակայն այդ պոլեմիկան համաձայնութեան չը յանգաւ: Վիճաբանողները իրանց համոզման մէջ հաստատ մնացին և Թօրէս վերջ ի վերջոյ առաջարկեց սօցիալիստական բոլոր խմբերի կոնգրէս հրաւիրել իմանալու համար, թէ ինչպէս է կուսակցութեան մեծամասնութիւնը նաւթում պրինցիպալիտետի պայմաններին: Թօրէսը երկպառակցութիւն գցեցին պատգամաւորների ժողովի սօցիալիստ անդամներին մէջ: Այդ կոնգրէսը կը գումարվի սեպտեմբեր ամսին: Գլխաւորը հարցը, որ կոնգրէսը պէտք է վճռէ, հետեւեալն է. արդեօք սօցիալիստական կուսակցութեան անդամը կարող է բուրժուազական միմիայնութեան անդամ լինել:

Թէ ինչպէս կը պատասխանի դրան կոնգրէսը, դա ցոյց կը տայ ապագան:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՆԻՑ

—Վանայ կուսակալը անցեալ օր առաջնորդարան փոխարարձ այցելութեան գացել է Արալանեան Ներսէս եպիսկոպոսին և մեծ պատուով ընդունուել է:

Վանէն յուլիսի 15 թուականաւ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ, նորբնութիւնը հոգեւոր Հովիւին պաշտօնին նկատմամբ—

«Ներսէս եպիսկոպոս Արալանեան հետզհետէ կը շեշտէ իր պաշտօնի բնութիւնը: Վահրիճ վարդապետը փոխադարձ կարգած է իրեն, Առաջնորդարանը ընթացիկ գործերը վարելու համար: Կըսեն թէ Ն. Սրբազնութիւնը մտադիր է առաջարկել կամ արդէն առաջարկած է Կենդոնտիւն Վարչութեան և Ս. Պատրիարք Հօր, որպէս զի Վահրիճ Վ. չը մեկնի Վանէն: Փոյի երթալու, այլ միշտ իրեն հետ մնայ, ցրչափ ինքն ի Վան կը գտնուի և Փոյին համար ուրիշ տեղապահ մը զրկէ Պատրիարքարանը:

—«Տ. Ներսէս Սրբազանը ամեն կիրակի մէջ մէկ եկեղեցի կերթայ, կամ ինքը կամ Վահրիճ Վ. կը բարոյգին: Ն. Սրբազնութիւնը Գաւառական Վարչութեան Ժողովոյց ու Խորհրդոյց նորա կազմակերպութիւն տալու դիմաւորութիւն ունի: Առ այժմ նոր Ուսումնական Խորհուրդ մը ընտրուեցաւ: 7 անձ բաղկացեալ, որոնց ատենապետն է Մանուէլ էֆ. Անանեան:

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.